ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2019 թվականի N 292-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի, 219[1] հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ քաղաքացի Արմինե Ալեքսանդրի Գազարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի հողակտորում ինքնակամ իրականացրել է շինարարական աշխատանքներ և կառուցել ծածկ, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արմինե Ալեքսանդրի Գազարյանին ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով:

2. Պարտավորեցնել Արմինե Ալեքսանդրի Գազարյանին՝ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետում մուծելու տուգանքը Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228101 հաշվին:

3. Պարտավորեցնել Արմինե Ալեքսանդրի Գազարյանին, օրինականցնել ինքնակամ կառուցված շինությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 27
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2019 թվականի N 293-Ա

### ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 68-Ն որոշման 2-րդ կետը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում և 06.4.1 խումբ ենթախմբի 5112 հոդվածը պակասեցնել 3,251.6 հազար դրամով, 04.5.1 խումբ ենթախմբի 5112 հոդվածն ավելացնել 1,306.8 հազար դրամով, 05.2.1 խումբ ենթախմբի 5112 հոդվածն ավելացնել 1,767.4 հազար դրամով և 5113 հոդվածը ավելացնել 177.4 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 27
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» մայիսի 2019 թվականի N 294-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Հովհաննես Դերենիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 2/28 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 27
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» մայիսի 2019 թվականի N 295-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Արտյոմ Համայակի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ այգեգործական տարածքի 6-րդ տեղամասի թիվ 8 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ այգետնակի վերակառուցման և պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 27
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«29» մայիսի 2019 թվականի N 296-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լեոնիկ Արտավազդի Կարապետյանի դիմումը՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/19 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրի բնակելի կառուցապատման 17,48 քառ.մետր մակերեսով հողակտորը և հողակտորում իր կողմից ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 17,39 քառ.մետր մակերեսով ավտոտնակը վարձակալությամբ իրեն տրամադրելու մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2012 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 31-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 1-ին փողոցի թիվ 1/19 հասցեի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 17,39 քառ.մ մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ 17,48 քառ.մ մակերեսով հողամասը առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրել Լեոնիկ Արտավազդի Կարապետյանին՝ 5 տարի ժամկետով:

2. Պարտավորեցնել Լեոնիկ Արտավազդի Կարապետյանին, կնքելու վարձակալության պայմանագիր և կատարելու դրանից ծագող իրավունքների պետական գրանցում:

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին՝ ստորագրելու անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2019 թվականի N 297-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Գևորգ Կնյազի Կարապետյանի (ծնված՝ 1958 թվականի հուլիսի 14-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել փոխելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-042-0367-0011 կադաստրային ծածկագրով 500,3 քառ.մետր մակերեսով գյուղատնտեսական նշանակության այգու նպատակային նշանակությունը բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի և օրինականացնել նշված հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16072018-07-0055 վկայական, տրված 2018 թվականի հուլիսի 16-ին, անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից 2018 թվականի սեպտեմբերի 17-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Կատարված ուսումնասիրությունից և անհատ ձեռնարկատեր Վալերիկ Գալստյանի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Գևորգ Կնյազի Կարապետյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-042-0367-0011 կադաստրային ծածկագրով 500,3 քառ.մետր մակերեսով հողամասում 2002-2005 թվականներին ինքնակամ կառուցել է ավտոտնակ՝ 52,43 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 66,8 քառ.մետր) և պարիսպ՝ 7,06 քառ.մետր մակերեսներով:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 և 18-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 21-ի թիվ 30-Ա որոշումը և հաշվի առնելով այն, որ Գևորգ Կնյազի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-042-0367-0011 կադաստրային ծածկագրով հողակտորում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Գևորգ Կնյազի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-042-0367-0011 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության այգին՝ 503,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար:

2. Գևորգ Կնյազի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական տարածքում գտնվող 07-042-0367-0011 կադաստրային համարի 503,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Անտառային փողոց, թիվ 2/1:

3. Գևորգ Կնյազի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Անտառային փողոց, թիվ 2/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը և պարիսպը համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221171 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 2 072 486 (երկու միլիոն յոթանասուներկու հազար չորս հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105221213 հաշվին՝ 115 222 (մեկ հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր քսաներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարումները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Մխիթարյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման չորրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

7. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության նախարարություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«29» մայիսի 2019 թվականի N 298-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արմինե Ալեքսանդրի Գազարյանի (ծնված՝ 1980 թվականի հուլիսի 12-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 15062015-07-0023 վկայական, տրված 2015 թվականի հունիսի 15–ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մայիսի 14-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Արմինե Ալեքսանդրի Գազարյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողակտորում 2018 թվականին ինքնակամ կառուցել է ծածկ՝ 63,67 քառ.մետր արտաքին մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Արմինե Ալեքսանդրի Գազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված ծածկի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ծածկը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Արմինե Ալեքսանդրի Գազարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 9-րդ փողոցի թիվ 4 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված ծածկը՝ 63,67 քառ.մետր արտաքին մակերեսով, համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 99 326 (իննսունինը հազար երեք հարյուր քսանվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2019 թվականի N 299-Ա

### ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«ՎՈՒԴՍ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արթուր Ռազմիկի Սաֆարյան, սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 5-րդ թաղամասի թիվ 1-2 հասցեում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ գրասենյակային տարածքների և հյուրատան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 29
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 300-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ԹԻՎ 256-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 16-ի «Հողի նպատակային նշանակությունը փոխելու, անշարժ գույքին հասցե տրամադրելու և ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու մասին» թիվ 256-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 1-ին կետում «իրականացնելու համար» բառերից հետո լրացնել «, իսկ հողակտորում կառուցված 24,33 քառ.մետր մակերեսով տնտեսական շինությունը սահմանել հասարակական նպատակային նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ պահակակետ»:

2) որոշման 3-րդ կետում «տնտեսական շինությունը՝ 24,33 քառ.մետր (արտաքին մակերեսը՝ 29,66 քառ.մետր) և պարիսպը՝ 19,11 քառ.մետր մակերեսներով, համարել օրինական:» բառերը փոխարինել «24,33 քառ.մետր մակերեսով (արտաքին մակերեսը՝ 29,66 քառ.մետր) հասարակական կառուցապատման պահակակետը և 19,11 քառ.մետր մակերեսով պարիսպը համարել օրինական:» բառերով:

2.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 301-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 492-Ա ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի ԹԻՎ 69-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 37-րդ հոդվածի 1-ին մասերով, «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ և 7-րդ կետերը, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչության պաշտպանությունը կազմակերպելու, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներն իրականացնելու նպատակով, ***որոշում եմ՝***

1. Ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային հետևյալ ծառայությունները.

1) Ինժեներական ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետը.

2) Կոմունալ-տեխնիկական ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենը.

3) Առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետը.

4) Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն՝

Ծառայության պետն ի պաշտոնե հանդիսանում է համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետը:

2. Ծառայությունների պետերին՝ մինչև 2019 թվականի հունիսի 5-ը մշակել և սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել ծառայությունների կանոնադրությունները՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ Կոտայքի մարզային փրկարարական վարչության հետ:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 29-ի «Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու և համայնքի ղեկավարի 2011 թվականի ապրիլի 22-ի թիվ 42-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 492-Ա և 2019 թվականի փետրվարի 8-ի «Համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 492-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 69-Ա որոշումները:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 302-Ա

## ԱՆԻ ՍԱՄՎԵԼԻ ԳՅՈՒՐՋՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Անի Գյուրջյանին սեփականության իրավունքով պատկանող LEXUS LX 570 մակնիշի 35QG389 պետհամարանիշի, TOYOTA LC200 4.6 GAS մակնիշի 35NT636 պետհամարանիշի, MERCEDES-BENZ G500 մակնիշի 35QL859 պետհամարանիշի և TOYOTA COROLLA 1.6 GAS մակնիշի 35NA557 պետհամարանիշի փոխադրամիջոցների՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 884 249 (ութ հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր քառասունինը) դրամ, այդ թվում՝ 779 855 (յոթ հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր հիսունհինգ) դրամ ապառք, 104 394 (մեկ հարյուր չորս հազար երեք հարյուր իննսունչորս) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Անի Գյուրջյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 16:30-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Անի Գյուրջյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 303-Ա

## ԳԱՅԱՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Գայանե Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող MERCEDES-BENZ ML 320 մակնիշի 98VD899 պետհամարանիշի փոխադրամիջոցի՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 198 232 (մեկ հարյուր իննսունութ հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ, այդ թվում՝ 133 400 (մեկ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) դրամ ապառք, 64 832 (վաթսունչորս հազար ութ հարյուր երեսուներկու) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Գայանե Խաչատրյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 16:45-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Գայանե Խաչատրյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 304-Ա

## ԳՐԻՇԱ ԺՈՐԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Գրիշա Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող VOLKSWAGEN TOUAREG 4.2 մակնիշի 35DT434 պետհամարանիշի փոխադրամիջոցի՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 384 469 (երեք հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր վաթսունինը) դրամ, այդ թվում՝ 315 125 (երեք հարյուր տասնհինգ հազար մեկ հարյուր քսանհինգ) դրամ ապառք, 69 344 (վաթսունինը հազար երեք հարյուր քառասունչորս) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Գրիշա Գևորգյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 17:00-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Գրիշա Գևորգյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 305-Ա

## ԱՌԱՔԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Առաքել Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող ՎԱԶ-2103 մակնիշի 43US245 պետհամարանիշի փոխադրամիջոցի՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 90 006 (իննսուն հազար վեց) դրամ, այդ թվում՝ 61 441 (վաթսունմեկ հազար չորս հարյուր քառասունմեկ) դրամ ապառք, 28 565 (քսանութ հազար հինգ հարյուր վաթսունհինգ) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Առաքել Դավթյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 17:15-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Առաքել Դավթյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 306-Ա

### ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԿԵԶԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Արթուր Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող AUDI A6 2.8 QUATTRO մակնիշի 78AA778 պետհամարանիշի փոխադրամիջոցի՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված գույքահարկի պարտավորությունը՝ 122 094 (մեկ հարյուր քսաներկու հազար իննսունչորս) դրամ, այդ թվում՝ 100 729 (մեկ հարյուր հազար յոթ հարյուր քսանինը) դրամ ապառք, 21 365 (քսանմեկ հազար երեք հարյուր վաթսունհինգ) դրամ տույժ, և Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 13-րդ փողոցի թիվ 9 և Մելքոնյան փողոցի թիվ 22/1 հասցեներում գտնվող շինությունների՝ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածներով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 22 188 (քսաներկու հազար մեկ հարյուր ութսունութ) դրամ, այդ թվում՝ 18 774 (տասնութ հազար յոթ հարյուր յոթանասունչորս) դրամ ապառք, 3 414 (երեք հազար չորս հարյուր տասնչորս) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Արթուր Մարգարյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 17:30-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Արթուր Մարգարյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 307-Ա

### ԱՆԻ ԴԵՐԵՆԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի բ) կետով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի 2019 թվականի մայիսի 27-ի զեկուցագիրը Անի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող ՕՊԵԼ-VECTRA-2.0 I մակնիշի 10OS452 պետհամարանիշի փոխադրամիջոցի՝ Հարկային օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված՝ գույքահարկի պարտավորությունը՝ 98 959 (իննսունութ հազար ինը հարյուր հիսունինը) դրամ, այդ թվում՝ 68 931 (վաթսունութ հազար ինը հարյուր երեսունմեկ) դրամ ապառք, 30 028 (երեսուն հազար քսանութ) դրամ տույժ, չկատարելու մասին, ***որոշում եմ.***

1.Անի Դավթյանի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:

2.Վարչական վարույթի քննարկման օրը նշանակել 2019 թվականի հունիսի 10-ին, ժամը 18:00-ին:

3.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել Անի Դավթյանին:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 308-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Սարո Մայիսի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ թաղամասի թիվ 7/24 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մեկ հարկանի բնակելի տան կառուցման և տարածքի մասնակի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 309-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Էդուարդ Բագրատի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր Ջրվեժ այգետարածքի 20-րդ թաղամասի թիվ 13 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սանհանգույցի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 310-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Խաչատուր Կարապետի Խադիշյանին և Լիլիթ Ստեփանի Լազարյանին տալ կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան և ավտոտնակի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 37 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Խաչատուր Կարապետի Խադիշյանին և Լիլիթ Ստեփանի Լազարյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 311-Ա

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի Ձոր գյուղի բնակիչ Արթուր Ալբերտի Գևորգյանի դիմումը, որով խնդրել է վերականգնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ձոր գյուղի 10-րդ փողոցի վրա գտնվող պահեստի սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքի հիմքերը:

Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ Ձոր գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 12 որոշմամբ Ջրվեժ համայնքի Ձոր գյուղի բնակիչ Արթուր Ալբերտի Գևորգյանին է սեփականաշնորհվել Ձոր գյուղի 10-րդ փողոցի վրա գտնվող 154,3 քառ.մետր մակերեսով պահեստի շենքը: Շենքի սպասարկման համար փաստացի օգտագործվող տարածքը կազմում է 580,3 քառ.մետր:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8, 16 և 118-րդ հոդվածի 6-րդ կետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30 և 48-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 21-ի թիվ 32-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ձոր գյուղի վարչական տարածքում գտնվող Արթուր Ալբերտի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 154,3 քառ.մետր մակերեսով պահեստի սպասարկման նպատակով փաստացի օգտագործվող 580,3 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողակտորի օգտագործմաան հիմքերը համարել վերականգնված և նշված հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձոր, 10-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1:
2. Ջրվեժ համայնքի Ձոր գյուղի 10-րդ փողոցի 1-ին փակուղու, թիվ 1 հասցեի՝ 580,3 քառ.մետր մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողակտորի օգտագործման հիմքերը կհամարվի վերականգնված՝ Արթուր Ալբերտի Գևորգյանի կողմից հողամասի՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքն ամբողջությամբ վճարելուց հետո, որը կազմում է 306 399 (երեք հարյուր վեց հազար երեք հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 30
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» մայիսի 2019 թվականի N 312-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լեոն Արամի Կայֆաջյանի (ծնված՝ 1946 թվականի հոկտեմբերի 29-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 30 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 026322 վկայականը, տրված 1998 թվականի օգոստոսի 28–ին, «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի մայիսի 29-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Լեոն Արամի Կայֆաջյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 30 հասցեի այգեգործական հողամասում 1999 թվականին ինքնակամ կառուցվել է պարիսպ՝ 12,2 քառ.մետր մակերեսով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Լեոն Արամի Կայֆաջյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 30 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, պարիսպը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Լեոն Արամի Կայֆաջյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1-ին զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 30 հասցեի այգեգործական հողամասում ինքնակամ կառուցված պարիսպը՝ 12,2 քառ.մետր մակերեսով, համարել օրինական:

2.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. մայիսի 31
գ. Ջրվեժ